ԱՐՇԱԿ ՏԷՐ-ՅՈՎՍԷՓԵԱՆ

# ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԳՐՔՈՅԿ I

«Ծուկը»
«Ճնճուռները»
«Տուարածի ճաշը»
«Հաւք խօսեց»
«Կանաչ ախպէր»
«Ոնց են հարում խնոցին»
«Արի դու, արի»
«Գարուն»
«Մանուշակ» և այլն:

Электропечатня А. Кереселидзе.
Габаевскiй пер. № 1.
ТИФЛИСЪ 1913

784.67
ՀՊ-37

ԱՐՇԱԿ ՏԷՐ-ՅՈՎՍԷՓԵԱՆ

# ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԳՐՔՈՅԿ I

«Շունը»
«Հնձւորները»
«Տաւարածի նաշը»
«Հայր խօսեց»
«Կանաչ ախպէր»
«Ոնց են հարում խնոցին»
«Արի դու, արի»
«Գարուն»
«Մանուշակ» եւ այլն:

Թիֆլիս, տպ. Կերեսելիձէի. Գարաեւսկայա № 1, 1913

(28310-Կ.Հ)

Մանկական երգերի մեծ պակասութիւն է զգացւում մեր մէջ. այդ տիպի երգերի քանակն այնքան նւազ է, որ այժմ՝ 20-րդ դարում դասագրքերի մէջ նոյնիսկ գրաբար երգեր են դնում մեր երեխաներին սովորեցնելու համար. ինչպէս, օրինակ, «Որդիք քաջ Հայկայ, արիք ընդ առաջ» կամ «Ով հայոց Աստուած, մեր արեամբ ստացուած» եայլն։ Այդ և նման խրթութիւնները, որ տեղի են ունենում մեր դպրոցական կեանքում, առիթ հանդիսացան հրատարակելու այս գրքոյկը որպէս նիւթ երեխաներին յարմար երգեր սովորեցնելու համար։

Գրքումս զետեղւած երգերից թւով 10 «Արի, դու արի». «Տաւարածի ճաշը», «Գարուն», «Հաւը խօսեց», «Տունը», «Հնձւորներ», «Մանուշակ», «Մայր», «Էյ կանաչ ախպէր», և «Ոնց են հարում խնոցին», մեր սեպհական հեղինակութիւնն է, «Փիսոն և Աքլորը» նոյնպէս մեր փոխադրութիւնը, իսկ մնացած մի քանի երգերը լսել և ձայնագրել ենք։

Հեղինակածս երգերի բառերը մեծ մասամբ պատկանում են Ղ. Աղայեանի և բանաստեղծ Յովհ. Թումանեանի գրչին, բացի «Գարուն» երգից, որ Գ. Մեսեանի հեղինակութիւնն է և «Մայրը» (փոխ.) Աթ. Խնկոեանի։

Արշակ Տէր-Յովսէփեան

Հայաստանի պետական գրադարան
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
20 13
266-Աւ
11348-57գ
1268-Ա 20 02

Արագ. ԱՐԻ՛ ԴՈՒ, ԱՐԻ՛. Խօսք Ղ. Աղայեանի




2. Ջիւն տուր սարերին,
Անձրև՝ արտերին,
Կարկուտը՝ չարին,
Զով արևը՝ մեզ։

3. Մայրական գթով,
Գրկաբաց ձեռքով,
Ուրախ ժպիտով
Առ քո գիրկը մեզ։

Միջակ. ՏԱՒԱՐԱԾԻ ՃԱՇԸ Խօսք Ղ. Աղայեանի




2. «Յամաք մի ուտիլ»,
Ասաց ընկերը։
—«Բս ինչով ուտեմ,
Ուրիշ բան չունեմ»։

3. Դանակով, եղբայր,
Դանակով կտրիր.
Ջրումը թրջիր,
Յամաք չի լինիլ…

Արագ

## ՈՆՑ ԵՆ ՀԱՐՈՒՄ ԽՆՈՑԻՆ






Միջակ.

## ՓԻՍՈՆ ՈՒ ԱՔԼՈՐԸ

Փոխադր. ռուսեր.




2. Մէկ անգամ էս կատուն
Դէպի շուկայ է գնում.
Աքլորին սիրելի
Այս պատուէրն է տալիս:

3. —Իմ սիրուն աքլորիկ,
Պատուհանին մօտիկ
Զըկանգնես ու չերգես.—
Աղուէսը կը տանի քեզ:

4. Բայց որ մեր կատուն հէնց
Տնից հեռանալ սկսեց,
Վազեց պատուհանի տակ
Այն աղուէսը խորամանկ.

5. «Իմ սիրուն աքլորիկ,
Կարմրագոյն կատարիկ.
Պատուհանին մօտեցիր՝
Ես քեզ կը տամ քաղցր չիր»:

6. Աքլորը անհամբեր
Մօտեցաւ, որ տեսնէր.
Իսկ աղուէսն անիրաւ
Ճանկեց նրան ու տարաւ...

Արագ․ **ԳԱՐՈՒՆ** Խօսք Գ. Մեսեանի




2. Դաշտ ու արօտ
Վազուց կարօտ
Ջերմ արևին կենսատու,
Ալ ու ալւան,
Կանաչ հագան,
Ողջունեցին իրարու։

3. Ջուր ու անտառ,
Հովիտ ու սար
Գոյն-գոյն ծաղկով զարդարուն՝
Իրար գրկում,
Երգ են երգում՝
«Ո՜հ, ինչ սիրուն է գարուն...»

## ՀԱՒԸ ԽՕՍԵՑ

Միջակ Խօսք Յովհ. Թումեանեանի









2. Զարն ու չարկամ մութ խաւարին,
Խաւարն անցաւ չար ու վատ,
Աշխարհ լըցւեց լուսն ու բարին,
Լուսն ու բարին անարատ։

## ՇՈՒՆԸ

Խօսք Յովհ. Թումանեանի






Արագ. ՀՆՁԻՒՈՐՆԵՐ մանկական խաղ

Մէկը

Խօսք Ղ. Աղայեանի








Խումբ



Ախ, ինչ լաւ է, ե՛ - կէք սով րենք,



մենք էլ այս - պէս խոտ հա րենք



հէյ հօ - - - պ հէյ հօ - - - պ։

Մէկը.—

2. Ահա եկաւ մեր հնձողը,
Ձեռքին փայտէ մատնոցներ
Պատրաստել է սուր մանգաղը,
Պէտք է հնձէ մեր արտեր։

Խումբը.—

Հնձող եղբայր, ասա տեսնենք,
Դու ինչպէս ես հունձ անում։

Հնձողը.—

Այսպէս ահա լաւ նայեցէք
Ես այսպէս եմ հունձ անում
Հէյ, հօպ, հէյ հօպ։

Խումբը.—Ախ, ինչ լաւ է. և այլն...



Մնջակ. ԱՌԱՒՕՏԸ ԳԻՒՂՈՒՄ Խօսք Ղ. Աղայեանի



Ա - րե - գա - կը դուրս է ե - կել պըս - պը ղա - լով



շող - քը հեր-թից ներս է ըն - կել շող - շո - ղա - լով։

2. Ծիտը ծառին կըչկըչում է
Ծըվվըլալով,
Ջրումն առուն քըչքըչում է
Վըշվըշալով։

3. Ծոյլ աղայի քունն է տարել
Խըռմփալով,
Տըրեխները շունն է տարել
Մըռմըռալով։

## ԳԱՐՈՒՆ Է ԵԿԵԼ

Խօսք Գամառ-Քաթիպայի



Գա - րուն է ե - կել նախ - շուն թև - ե -



րով նախ շուն թև ե - րը պէս - պէս ձև - ե - րով։

2. Գոյն-գոյն ծաղիկներ՝
Կարմիր ու սպիտակ,
Վարդ, մեխակ, շուշան
Անուշ հոտերով։

3. Երկինք և երկիր
Ուրախ են, գարուն,
Շատ գեղեցիկ ես,
Եղանակ սիրուն։

## ՄԱՅՐԸ փոխ. ռուս. Աթ. Խնկոյեանի.




2. Անքուն մէրիկը
Ընկած զոյգ ծնկան՝
Օրօր է ասում,
Օրօրում մանկան:

4. Ախ, դուք լսեցէք,
Մայրն է գեղգեղում
Թողէք՝ մանկիկս
Ննջի իր տեղում:

3. —Էհ, հերիք, հերիք,
Քամի ու մրրիկ,
Հանգիստ, չինարներ,
Քամու քնարներ:

5. Էլ մի սրտայ,
Դու, անեղ սրտ.
Իմ անուշ բալէն
Քնի է կարօտ:

6. Հեռացէք, ամպեր,
Ամպեր բքածին,
Հանգիստ քուն տւէք
Սրտիս սիրածին...



## ՈՐԲԸ




2. Գիշերւայ մութը աշխարհս պատեց,
Եւ աշնանային ցուրտ քամին փչեց.
3. Ամէն մարդ քաշւեց, իր տունը մտաւ,
Ամէն երեխայ մօր գիրկն ընկաւ.

4. Միայն մի խեղճ որբ, որ չունէր հայր, մայր
Ոչ մի ազգական, ոչ քոյր, ոչ եղբայր,
5. Ոտքերը բոբիկ, տկլոր ու քաղցած,
Մի տան պատի տակ մնաց կուչ եկած...

## ԿԱՂՆՈՒ ՎԱՐԶԻՈՐՆԵՐԸ

Արագ.




2. Աստղձապործ փայտփորիկը
Յածի յարկի խանութում
Անց է կացնում իր օրիկը,
Թակում, կտցում, ծակոտում:

3. Իսկ վերևի յարկում տխտիկ
Շէկ սկիւռն է բնակւում.
Կաղին, ընկոյզ, սերմ ու հատիկ
Դիզած իր լի փչակում:

4. Թա ճիւղքումը դրել է բուն
Մի գիլ երգիչ գուրալի
Ու ճըլըլում է օրն ի բուն.
Իսկ վարձ ոչ-ոք չի տալի:



## ԿԱՆԱՉ ԱԽՊԷՐ

Միջակ. Բանաստ. Յովհ. Թումանեանի






ՄԱՆՈՒՇԱԿ

Խոսք՝ Ղ. Աղայեանի




2. Սիրուն մանկիկներ, դուք ինձ սիրեցիք,
Իմ ծաղիկներից փնջեր կապեցիք,
Բայց կոշտ ձեռներից, կոպիտ ճանկերից
Ինձ չազատեցիք, չ[illegible]ցիք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ստուգված է 1957 թ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0684067

1268
Երգա

784
ԴԼ-37

ԳԻՆՆ Է 25 ԿՈՊ.

10 коп.

Դիմել հեղինակին՝ Тифлисъ, Анановск. женск. училище, учителю музыки и пѣнія А. М. Теръ-Осепянцъ.